Այդ ի՞նչ մարդ էք բերել, ընտրել
Ձեր աշխարհքին տէր ու իշխան.
Թագաւորին չէք հարցրել
Ու անպատուել այսպէս նրան:
Շո՛ւտ, վա՛ր առէք այդ նոր պետին,
Շղթա դրէք ձեռ ու ոտին,
Հիմա կգա թագաւորը,
Սեւացնելու դրա օրը:

ՆԱԶԱՐ.– (Դռոից ատամները կափկափելով, դեսուդեն է ընկնում) Բը՛, բը՛, բը՛, բը՛… Էս էլ քեզ նոր խաթա… Տեսնենք ո՞նց ես պրծնում:

ՂՈՌՈԲՈՒՂԱ.–

Կոորի, գնա, անխելք մաարդուկ,
Քաաջ Նազարին չէք տեսել դուք,
Տեեսել էք ձեր թաագաւորին,
Մժեղ-մլաակ ձեր զօրքերին:
Գնա, ասա թաագաւորին,
Որ էլ իրեն չենք ճանաչում,
ճանաչում ենք Քաջ Նազարին,
Աստուած՝ վերեւ, նա մեր միջում:

ԴԵՍՊԱՆ.–

Կերթամ կասեմ թագաւորին,
Գա սեւ կապի թող ձեր օրին: (Գնում է:)

ՆԱԶԱՐ.– (Ճամփա որոնելով փախչելու) Ձանը՛մ, էս իմ ձին ո՞ւր տարան: (Ման է գալիս անհանգիստ:)

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– (Հսկաներին)

Հա՛մմ, զէէնք կապէք, պաատրաստուեցէք:
Քաաջ Նազարին հետեւեցէք:
Եկե՛ք մէջտեղ՝ շաարուէք մի-մի,
Կռիի՛ւ պիտի բացուի հիմի:

Փողեր են փչում:

ՄՈՒՆԵՏԻԿ.– Թշնամիները երեւացի՞ն…

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Հա՛մ… Բեերէք շուտով Նաազարի ձին,